ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9. 1959 Общественные науки

Պ. Ռ. Ոսկերչյան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱԼԹՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Աղգաբնակչության վերաբերյալ Մալթուսի տխրահռչակ «թեորիան» երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առանձնապես ակտուալ նշանակություն ստացավ ռեակցիոն ուժերի համար: Հանդես եկավ մալթուսականների մի նոր սերունդ, որը ծայրահեղորեն սրեց այդ «թեորիայի» ռեակցիոն կողմերը:

Ինչպես հայտնի է, մալթուսյան թեորիայի հիմքում ընկած է հողի նվազող պտղաբերության «օրենքը», որից ամուր կառչում են բուրժուական տընտեսագետները: Այս թեորիայի էությունը հիմնականում հանգում է այն բանին, որ իբր թե որոշ սահմաններից հետո հողը բերքի մշտապես անկում է ունենում, և որ ոչ մի միջոցառում չի կարող վերականգնել այդ խախտված վիճակը, ինչքան էլ զարգանա տեխնիկան:

Կապիտալիստական գյուղատնտեսության զարգացման օբյեկտիվ փաստերը հերքում են հողի նվազող պտղաբերության թեորիայի կողմնակիցների պնդումները: Ճշմարտությունն այն է, որ կապիտալիստական գյուղատնտեսական արտադրությունը հսկայական չափով ավելացրեց սննդամթերքների և հումքի քանակը մանր արտադրության համեմատությամբ: Այլապես ինչպես կարելի էր կապիտալիստական քաղաքների աճող բնակչությունն ապահովել կենսամթերքներով, իսկ թեթև և սննդի արդյունաբերությունը գյուղատնտեսական հումքով:

Ներկայումս կապիտալիստական ֆերմերային և պլանտատորական տընտեսության մեջ արմատավորվել են մեծ քանակությամբ մեքենաներ և սարքավորումներ, ամեն տարի հսկայական քանակությամբ քիմիական պարարտանյութ է օգտագործվում ցանքադաշտերում և արոտավայրերում: Մեքենայական տեխնիկայի կիրառումը հոդագործության մեջ արմատական փոփոխություն է մտցնում արտադրական աշխատանքի բալանսի մեջ, ըստ որում ֆիզիկական նվազում է կենդանի աշխատանքը, որը առաջ է բերում ադրարային գերբնակչություն, և դրա փոխարեն ավելանում է առարկայացված մեքենայական աշխատանքը, իսկ վերջինը բարձրացնում է բանվորների շահագործման աստիճանը:

Ժամանակակից բուրժուական տնտեսագետները և նրանց ամենառեակցիոն, մարդատյաց խավը՝ նոր-մալթուսականները աչքերը փակում են ռեալ փաստերի առջև և շարունակում են պնդել այն տեսակետը, որ իբր թե երկրագնդի հողատարածությունը չի կարող կերակրել գոյություն ունեցող բնակչությանը, ուստի «անհրաժեշտ» է կիրառել բնակչության նվազեցման արմատական միջոցառումներ:

Մոտիկ անցյալում Անգլիայում լույս տեսավ Դեդլի Բարկետի «Բրիտանական երկրների աղգերի համագործակցության մարդկային պահանջը» խո-

բագիր կրող գիրքը, որի մեջ նա հաստատում է, թե Բրիտանական կղզիների վրա ապրող 51 միլիոն բնակչությունից 20 միլիոնը ավելորդ է։ Նրա կարծիքով պետք է այդ 20 միլիոն բնակչությունը գաղթեցնել կայսրության գաղութները։ Այս առաջարկությունը երկու նպատակ է հետապնդում, նախ՝ էլ ավելի մեծացնել կապիտալիստական հողատիրությունը Բրիտանական կղզիներում, դուրս մղելով երկրից մանր արտադրողների վերջին մնացորդները, երկրորդ ամրապնդել բրիտանական իմպերիալիզմի տիրապետությունը գաղութներում, հիմք ունենալով սեփական բնակչությունը։

«Փրկության ուղին» գրքում ԱՄՆ-ի հայտնի մալթուսական Ֆոգտը նպատակ է դրել ապացուցել, որ ներկայումս մալթուսյան թեորիայի կիրառումը գործնական անհրաժեշտություն է։ Նա փորձում է ցույց տալ, որ երկրագնդի վրա գոյություն ունի «գերբնակչությունը», դրա համար կատարում է ամեն տեսակի կեղծ հաշիվներ գյուղատնտեսության համար հողային տարածության անբավարար լինելու վերաբերյալ և այլն։ Ավելին՝ նա այս գրքում կոչ է անում պայքար մղել բժշկության դեմ, պնդելով, որ առողջապահության զարգացումը հանդիսանում է գերբնակչության առաջացման պատճառը։ «Սանիտարական ռևոլյուցիայից հետո, պնդում է Ֆոգտը,—սկսվեց բնակչության արագ աճ։ Ըստ Ֆոգտի, պետք է արգելել բժիշկների պայքարը համաճարակների և այլ կարգի հիվանդությունների դեմ, որոնք հաճախ են բռնկվում կապիտալիստական երկրներում՝ աշխատավորների սննդի և կենցաղային վատ պայմանների հետևանքով։

Ամերիկյան մալթուսականներ Պերսոնը և Խարպերը «Համաշխարհային սով» գրքում պնդում են, որ իբր թե երկրագնդի հողային տարածության 60%-ը պիտանի չէ երկրագործության համար, իսկ մնացած տարածության 36%-ը տեղագրական պատճառներով անպետք է։ Նրանց կարծիքով երկրագնդի հողային տարածության միայն 7%-ն է օգտագործելի։

Այս հաշվարկների հիման վրա նոր-մալթուսականները եզրակացնում են, թե մարդու կյանքի պայմանները բավարարելու համար պահանջվում է 2,5 ակր հող։ Ըստ Ֆոգտի ամբողջ երկրագնդի օգտագործվող հողը կարող է կերակրել 900 միլիոն մարդ, իսկ մնացած բնակչությունը ավելորդ է, որովհետև հողի պտղաբերությունն ընկնում է, հողային տարածությունը խիստ սահմանափակվում է գյուղատնտեսության համար։ Կգա ժամանակ, երբ երկրագնդի ամբողջ հողը կկարողանա կերակրել միայն 500 միլիոն մարդ, ուստի մնացած երկու միլիարդը ավելորդ է։

Նախ՝ սխալ է այն մոտեցումը, երբ մարդկանց կերակրելու համար կատարած հաշվարկները որոշվում են հողային տարածության չափով, քանի որ հողը չունի բերքատվության բացարձակ սահման։ Մեկ հեկտար հողի լավ մշակման դեպքում կարելի է այն աստիճան բարձրացնել բերքատվությունը, որ հնարավոր լինի բավարարել շատ մարդկանց կերակրման պահանջները։

Այս իմաստով կարելի է ասել, որ բնության մեջ չկա բացարձակ լավ և վատ հող, այլ կա հողի մշակման լավ և վատ հասկացողություն։ Երկրորդ՝ Ֆոգտը և նրա կողմնակիցները սխալվում են, երբ երկրագնդի օգտակար հողի տարածությունը մի անգամ ընդմիշտ կայուն թիվ են ընդունում։ Գիտության և տեխնիկայի զարգացումը հնարավորություն է տալիս լուրացնելու երկրների խամ ու խոպան, անտառային և բևեռային գոտիներում եղած անօգտագործելի հողերը՝ գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման համար։

1951 թվականին Նյու-Յորքում հրատարակված իր «Ազգաբնակչության անգուսպ աճը» աշխատության մեջ Պենդելի նշած «փաստարկումներից» մեկը համաշխարհային սովի անխուսափելիության վերաբերյալ «թեորիան» է։ Նրա կարծիքով, գյուղատնտեսության բերքատվության ավելացումով հողը անպետքանում է, արագանում է էրոզիան և ոչնչանում են հողի վերին՝ բերքառու շերտերը։ Այս տեսակետը հիմնավորելու համար նա բերում է ԱՄՆ-ի անտառային տարածությունների, միլիոնավոր հեկտար բերրի հողերի ոչնչացման և բնական հանածական ռեսուրսների դիշատիչ օգտագործման փաստերը։ Այդ փաստերը, իրոք, հատուկ են կապիտալիստական աշխարհին և նրանք հարվածում են կապիտալիզմի իդեոլոգիական սպասավորներին, մերկացնում նրանց «թեորիաներին» հակագիտական և հակահասարակական բնույթը։

Նոր-մալթուսականները իրենց ռեակցիոն տեսակետն են շարադրում ազգաբնակչության կատեգորիաների և առանձին երկրների բնակչության թվի արհեստական նվազեցման մասին։ Պենդելը հասարակությունը բաժանում է երկու կատեգորիաների, ելնելով մարդկանց ունեցած դոլարների քանակից։ Այս բաժանումը իբր թե ձեռք է բերվում բնական ընտրությամբ՝ մարդկանց գոյության պայքարի հետևանքով։ Սա ռասիզմի նոր տեսակ է՝ դոլարային ուլտրա-ռասիզմ։

Մարքսիզմ-լենինիզմը գիտականորեն վաղուց է ապացուցել, որ կապիտալիստական զարգացումը հասցրել է այն բանին, որ կապիտալի կուտակումը ստեղծել է բուրժուական հասարակության մի բևեռում հակայական նյութական հարստություններ, որի հիման վրա աճում են պորտարույծների և շահագործող դասակարգերի շռայլությունները, իսկ հասարակության մյուս բևեռում դնալով ավելի է ուժեղանում շահագործումն ու ճնշումը, աճում է այն մարդկանց դժբախտությունն ու աղքատությունը, որոնք իրենց աշխատանքով ստեղծում են բոլոր հարստությունները։

Իմպերիալիզմի դաղափարախոսները միլիոնավոր մարդկանց ոչնչացնելու համար բազմաթիվ փաստարկներ են հորինում։ Վիլյամ Ֆոգտը «Փրկության ուղին» գրքում պահանջում է, որ Սովետական Միությունը կրճատի իր բնակչության քանակը՝ հասցնելով 150 և նույնիսկ 100 միլիոնի։ Այս իմաստով էլ Պետկինը չթուլացնող եռանդով պահանջում է պատերազմ սկսել Սովետական Միության դեմ՝ հայտարարելով, թե «ամերիկյան բնակչության աղքատացման համար մեղավոր է ՍՍՀՄ-ը»։

Այո, քանի գոյություն ունի արտադրության կապիտալիստական եղանակ, այդքան ժամանակ հողը և նրա ընդերքի հարստությունները կօգտագործվեն դիշատիչ կերպով մի խումբ խոշոր կապիտալիստների շահերի համար, իսկ տասնյակ միլիոնավոր բանվորներ և աշխատավոր գյուղացիներ մշտապես կտառապեն կարիքի և աղքատության, շահագործման ու զրկանքի մեջ։

Պենդելի տիրահոչակ «թեորիային» կարելի է հակադրել Ժողովրդական Չինաստանի գյուղատնտեսության զարգացման և հողի բերքատվության բարձրացման ցնցող փաստերը։

Չինաստանը և Բրազիլիան մի քանի կողմերով ունեն մոտիկ նմանություններ։ Բրազիլիայի տերիտորիան կազմում է 8 միլիոն 516 հազար քառ. կմ, Չինաստանինը՝ 9 միլիոն 9 հարյուր հազար քառ. կմ։ Երկու երկրների օգտագործելի հողատարածությունը 1952 թ. տվյալներով կազմել է 11%, նրանք ունեն բնական և աշխարհագրական պայմանների նմանություն, սա-

կայն երկու երկրների միջև կան սոցիալ-անտեսական և արտադրական խոր տարբերություններ։ Չինաստանի տերիտորիայի վրա ապրում են 600 միլիոն մարդ, իսկ Բրազիլիայի՝ 61 միլիոն մարդ։ Ոչ հեռու անցյալում նրանց տնտեսական զարգացման մակարդակի միջև չկար մեծ տարբերություն։ Սակայն Չինաստանի ժողովուրդը դնաց հասարակական-տնտեսական զարգացման սոցիալիստական ուղիով։ Չինաստանում հաղթանակեց ժողովրդական ռևոլյուցիան, իսկ Բրազիլիան մնաց բուրժուական իշխանության սիստեմում, տնտեսության թույլ զարգացման աստիճանի վրա, որին հատուկ են նյութական բարիքների արտադրության ցածր մակարդակը, բնակչության պարենային կարիքը, սովը և աղքատությունը։

Չինաստանում արտադրության միջոցների հանրային սեփականության և արտադրողական ուժերի բուռն զարգացման հիման վրա չտեսնված չափերով ավելանում է նյութական բարիքների արտադրությունը։ Այնտեղ ոչ միայն ոչնչացված է սովի ուրվականը, որը հազարամյակների ընթացքում սպառնում էր երկրի բնակչությանը, այլև աշխարհահռչակ ռեկորդային բերք է ստացվում գյուղատնտեսության արտադրությունից։ 1952 թ. Չինաստանի պարենային կուլտուրաների արտադրությունը (բրինձ, ցորեն և այլն) կազմեց 154 մլն. տոննա, 1957 թ.՝ 185 մլն. տոննա, իսկ 1958 թ. հասավ 350 մլն. տոննայի։

Այլ խոսքով ասած, 1958 թ. բերքը, 1957 թ. համեմատությամբ ավելացել է 11 միլիարդ փթով։ 1959 թ. սպասվում է գյուղատնտեսության բերքը հասցնել 33 միլիարդ փթի, այսինքն՝ 11 միլիարդ փթով ավելի, քան 1958 թ.։

Եթե 1958 թ. Չինաստանի գյուղատնտեսությունից ստացված բերքը բաժանենք մեկ շնչի վրա, ապա յուրաքանչյուրին ընկնում է 550 կգ հացահատիկ, 1957 թ. 313 կգ դիմաց, իսկ 1959 թ.՝ 750 կգ, այսինքն՝ 40%-ով ավելի բարձր, քան 1958 թ.։

Այդ նույն ժամանակ Արևմտյան Եվրոպայի երկրներում գյուղատնտեսության բերքաբերությունը աճում էր շատ դանդաղ։ Ֆրանսիայում ցորենի բերքը 1900 թ. կազմել է՝ 8,3 մլն. տոննա, 1938 թ. հասել է ընդամենը 9,8 մլն. տոննայի, իսկ 1958 թ. 10 մլն. տոննայի, կարտոֆիլի բերքը նշված ժամանակում գրեթե նույնն է մնացել։ Այս այն դեպքում, երբ պոդպատի արտադրությունը Ֆրանսիայում աճել է 10 անգամ։

Խունանի նահանգում (Չինաստան) 1958 թ. բրնձի 500 հազ. հեկտար տարածության ամեն մի հեկտարից ստացված միջին բերքը կազմել է 75 գենտներ, աշնանացան ցորենի 600 հազար հեկտար ցանքի ամեն մի հեկտարից՝ 37 գենտներ, իսկ 50 հազ. հեկտար տարածության ամեն մի հեկտարից 75-100 գենտներ։

Այս թվերի նշանակությունը ավելի հասկանալի կդառնա, եթե համեմատենք Արևմտյան Եվրոպայի երկրների մեկ հեկտար տարածությունից ստացված ցորենի բերքի հետ։ 1957 թ. Արևմտյան Եվրոպայի երկրներում մեկ հեկտար ցորենի միջին բերքը կազմել է 18,6 գենտներ, Ֆրանսիայում՝ 23,6 գենտներ և ԱՄՆ-ում՝ 14,4 գենտներ, չնայած այն բանին, որ այնտեղ գյուղատնտեսության աշխատանքների մեքենայացման աստիճանը մի քանի անգամ բարձր է, քան Չինաստանի գյուղատնտեսության մեջ։

Բուրժուական տնտեսագետները չեն ուզում հաշվի նստել սոցիալիստական երկրների գյուղատնտեսության նվաճումների հետ և համառ կերպով

պնդում են իրենց հակագիտական տեսակետը և հանդես են գալիս պայքարի նոր զենքով։

Անգլիական ռեակցիոն գրող Ալդոս Հակսլին կոչ է անում լայն կերպով ծավալել նոր-մալթուսականությունը, որպեսզի խախտվի աշխատավորների հավատը սոցիալիզմի, կոմունիզմի նկատմամբ։

Ամերիկյան մալթուսականները նոր համաշխարհային պատերազմի բացահայտ կողմնակիցներ են։ 1945 թ. ամերիկյան տնտեսագետների 57-րդ կոնֆերանսին ելույթ ունեցողներից շատերը սառնարյուն կերպով գատողություններ էին անում այն մասին, թե ամերիկյան կապիտալիզմի համար ցանկալի և նույնիսկ անհրաժեշտ է նոր պատերազմը։ Բենետ Բոուլդինգը իր զեկուցման մեջ հայտարարեց՝ «Մեր դարի խոշորագույն պրոբլեմը ներկայումս այն է, որ սպառումը այնպիսի մակարդակի բարձրացվի, որ կարելի լիներ պահպանել լրիվ արտադրություն։ Դժբախտաբար, մեծ մասշտաբով սպառման միակ ընդունելի մեթոդը պատերազմն է, և ակներևաբար, հենց այդ մեթոդին էլ ազգերը դիմում են, երբ առատության բեռը չափազանց ծանր է դառնում։ Աշխարհը ներկայումս գտնվում է հենց իր ստեղծած հրեշավոր երկընտրանքի ճիրաններում՝ կամ ընդլայնել սպառումը պատերազմի միջոցով, կամ էլ կրճատել արտադրությունը ճգնաժամերի ու գործազրկության միջոցով»[1]։

Բենետ Բոուլդինգի պահանջի այն մասը, որը վերաբերում է «ընդլայնել սպառումը պատերազմի միջոցով» նշանարան է դարձել ամերիկյան իմպերիալիզմի և նրա կողմնակից պետությունների ագրեսիվ պլանի դեկավար սկզբունքի, որ պրակտիկորեն իրագործվում է էկոնոմիկայի ռազմականացման, պետական բյուջեի անարտադրողական-ռազմական ծախսերի աճման, կապիտալիստական երկրների ագրեսիվ բլոկներ ստեղծելու, գաղութային լծից ազատագրված և տնտեսապես հետամնաց երկրներին ագրեսիվ բլոկների մեջ ընդգրկելու միջոցով։

Ամերիկյան մալթուսականները պահանջում են, որպեսզի կառավարությունը իր վրա վերցնի ամլացման գործը, որն արդեն իրագործվում է պրակտիկայում։ 1952 թ. Հնդկաստան և Ցեյլոն ուղարկվեցին ամերիկյան հատուկ մասնագետներ՝ «ծնվողների վրա հսկողություն սահմանելու համար»։ Ամերիկյան օկուպացիոն իշխանությունների ճնշման տակ Ճապոնիայում 1948 թ. օրենք ընդունվեց ամլացման մասին։ Այնուհետև ամերիկյան մալթուսականները առաջարկում են «գենետիկական որակի» պլան, որի նպատակն է բարելավել ազգաբնակչության կազմը բարձր ռասայի միջոցով և նրա աճման համար «մեծ արտադրողական ցեղերը» ստեղծել։ Այս կարգի հակամարդկային առաջարկությունները և պահանջները վերցված են ֆաշիզմի ռասայական թեորիայի «գանձարանից»։

Ամերիկյան մալթուսականներից ետ չեն մնում անգլիացիները։ Անգլիայում լորդ Դանգեն պարլամենտի վերին պալատում 1957 թ. նոյեմբերի 7-ին ունեցած իր ելույթում ասաց. «Մենք ավելի շուտ կգերադասենք միջուկային պատերազմում աշխարհի կեսը ոչնչացնելու հեռանկարը, որպեսզի այնուհետև ազատ մարդկանց փոքրաթիվ միաբանությունը նորից կարողանա կառուցում

[1] Ընկ. Պոսպելովի՝ 1958 թ. ապրիլի 23-ի զեկուցումից Վ. Ի. Լենինի ծննդյան 88-րդ տարեդարձի առթիվ։

սկսել, քան մի այնպիսի աշխարհ, որտեղ ամենքը կարողանան շարունակել գոյությունը, որպես կոմունիստական բռնակալության ստրուկներ»[2]։

Այս կարգի մարդիկ ըստ էության ատում են ոչ միայն կոմունիզմը, այլև մարդկությունը։ Կապիտալիստական երկրներում մարդատյաց փիլիսոփայության կրողներին հակադրվում են մի շարք առաջավոր գիտնականներ, որոնք հանդես են գալիս պատերազմի դեմ և պահանջում են երկու սիստեմների խաղաղ գոյակցության սկզբունքի հարատև իրագործում։

Բուրժուական տնտեսագետները աշխատում են մոդիֆիկացիայի ենթարկել մալթուսականությունը՝ հանդես գալով նրա նոր վարիանտներով։ Նրանք առաջ են քաշում ոչ թե բնակչության աճի և սպառման միջոցների արտադրության անհամապատասխանությունը, այլ առաջին հերթին «կապիտալի», այսինքն՝ արտադրության միջոցների անրավարար վիճակը։

Արևմտա-գերմանական տնտեսագետ Ուլրիխը քննադատում է նրանց, ովքեր սպառման առարկաների արտադրության պրոբլեմը կապում են լավ հողերի անրավարար լինելու հետ։ Ուլրիխի տեսակետով կապիտալի պակասության հետևանքով իջնում է հասարակության նյութական կյանքի մակարդակը։ Նա կոչ է անում մեծացնել կապիտալի չափը, որը ժամանակակից հասարակության համար ունի վճռական նշանակություն։ Երբ խոսում ենք գերբնակչության մասին, — ասում է Ուլրիխը, — ապա անպայմանորեն պետք է այն համադրենք առաջին հերթին կապիտալի մեծության հետ։ Երբ կապիտալը չի մեծանում այն տեմպերով, ինչպես պահանջում է ազգաբնակչության աճը, — գրում է ֆրանսիական բուրժուական դեմոգրաֆ Լեոն Բուժը, — ապա էկոնոմիկան չի կարող ընդգրկել նոր բանվորների, որոնք անգործ են։

Մալթուսականության նոր վարիանտի փաստարկումները և հաշվումներն անհիմն են այնքանով, որքանով, որ կապիտալիստական երկրներում բավականին մեծ չափերի հասած կապիտալները կուտակել են բանվոր դասակարգի անցյալ և ներկա սերունդների անողոք շահագործումից։ Ոչ մի տրամաբանական կապ չկա կապիտալի չափի և աշխատավորական մասսաների կյանքի բարելավման միջև, ընդհակառակը՝ որքան կապիտալը մեծ է կապիտալիստական տվյալ երկրում, այնքան էլ մեծանում է աղքատությունը։ Ահա, օրինակ, ԱՄՆ-ը կապիտալիստական աշխարհի ամենահարուստ և զարգացած երկիրն է, սակայն աշխատավորական մասսաների շահագործման աստիճանն էլ այս երկրում բարձր է, մեծ է նաև բանվորների գործազուրկների բանակը։

Վերցնենք երկու փաստ։ Այն ժամանակ, երբ աշխատավորները բացարձակորեն աղքատանում են, ԱՄՆ-ի մոնոպոլիստները հսկայական կապիտալ են կուտակում։ ԱՄՆ-ի 200 մոնոպոլիստներ 1939 թ. մինչև 1951 թ. ստացել են տարեկան հետևյալ չափի շահույթ. 1939 թ.՝ 1,200 մլն. դոլար, 1941-1944 թթ. միջին տարեկանը կազմել է 3,500 մլն. դոլար, 1948 թ. 5,300 մլն. դոլար, 1950 թ.՝ 7,900 մլն. դոլար, 1951 թ.՝ 6,600 մլն. դոլար,[3] իսկ 1958 թ. պաշտոնական տվյալների համաձայն ամերիկյան մոնոպոլիստների մաքուր շահույթները կազմել են 30 մլրդ. դոլար[4]։

---

[2] Նույն տեղում։

[3] С. Ф. Буренко, Мальтузианство в работах американских географов, стр. 8, 1954.

[4] Вопросы экономики, № 12, стр. 109, 1958.

Ամերիկայի Միացյալ Նահանգների բանկիրները, խոշոր արդյունաբերության կորպորացիաներն ու այլ խոշոր կապիտալիստները՝ կազմելով ամերիկյան բնակչության ընդհանուր թվի 10%-ը, տիրապետում են երկրի հարստության 59%-ին այն դեպքում, երբ բնակչության 87%-ին պատկանում է ազգային հարստության 8%-ը։

Ամերիկյան առաջադեմ տնտեսագետ Վ. Պերլոյի հաշվումներով 12 տարվա ընթացքում, 1941-1952 թթ., ԱՄՆ-ի կորպորացիաների շահույթի գումարը 7,6 անգամ գերազանցել է նախորդ 12 տարվա ստացած շահույթի գումարից[5]։

ԱՄՆ-ի վերամշակող արդյունաբերության մեջ 1938 թ. կապիտալիստները ստացել են մեկ բանվորից 293 դոլար շահույթ, 1943 թ.՝ 833 դոլար, 1949 թ.՝ 1045 դոլար և 1951 թ.՝ 1619 դոլար։ 1950-1951 թթ. բյուջետային տարում, 1938-1939 թթ. համեմատությամբ, աշխատավորներից գանձվող հարկերը ավելացան 8 անգամ։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան բանվորների ռեալ աշխատավարձը պակասեց մոտավորապես երկու անգամ, նույն չափով պակասեց նաև ֆերմերների եկամուտը։

Ժամանակակից մալթուսականները օգտագործում են բանվորական ֆոնդի նորագույն վարիանտը՝ ազգաբնակչության օպտիմումի թեորիայի ձևով։ Այս թեորիայի համաձայն գոյություն ունի բնակչության չափի օպտիմում քանակություն, որից ավելին համարվում է անցանկալի։ Օպտիմումի թեորիայից ելնելով բուրժուական տնտեսագետները փորձում են պատասխան տալ այսպես կոչված «արժեքայնության պրոբլեմ»-ի հետ կապված հարցին։ Որոշ խմբի համար բարձրագույն արժեքայնությունը հանդիսանում է անհատների մի մասի մաքսիմալ բարեկեցության նվաճելը, կամ «հարստություն» ձեռք բերելը։ Բուրժուական տնտեսագետների մի ուրիշ խումբ, որպես գերագույն արժեքայնության չափանիշ առաջարկում է լրիվ «զբաղվածության հասնելը»։ Երրորդ խմբի կարծիքով բնակչության օպտիմումը կարելի է սահմանել, ելնելով երկրի ռազմատնտեսական հզորությունից։

Այսպիսով, օպտիմումի թեորիայի կողմնակիցների կարծիքով բոլոր երկրներում գոյություն ունի միայն գերբնակչություն, և նրանց ամբողջ նպատակը այն է, որպեսզի տարբեր վարիանտներով անցկացնեն իրենց հակամարդկային տեսակետը ազգաբնակչության մի մասի ոչնչացման վերաբերյալ։

Մալթուսականության թեորիան տարածվել է նաև տնտեսապես հետամնաց երկրներում, որտեղ ազգաբնակչությունը ավելի մեծ քանակ է կազմում, իսկ արտադրողական ուժերի ցածր զարգացման և անցած ֆորմացիաների մնացորդների ուժեղ պահպանման հետևանքով աշխատավոր մասսաները տընտեսապես ավելի ծանր պայմաններում են ապրում։

Հնդկաստանի էկոնոմիստ Պունը «Մնունդ և ոռոգման պրոբլեմները» գրքում հաստատում է, որ ներկայումս Հնդկաստանում գործում է Մալթուսի սկզբունքը։ Հնդկաստանի բնակչությունը տարեկան աճում է 1%-ով, Պունի կարծիքով դա մեծ աճ է, և այդ պատճառով էլ ժամանակակից Հնդկաստանում կենսամիջոցները չեն բավականացնում երկրի բնակչությունը կերակրելու համար։

Հայտնի է, որ Հնդկաստանը ունի բնա-աշխարհագրական և արտադրական շատ նպաստավոր պայմաններ, բազմատեսակ հանքային հարստություն-

[5] В. Перло, Теория „Революции доходов", стр. 59, 1957.

ներ, գյուղատնտեսության օգտագործման հողեր, որոնք տարեկան մի քանի բերք են տալիս։ Հակառակ այս նպաստավոր պայմաններին Հնդկաստանը տնտեսապես հետամնաց է, բնակչության մեծ մասը աղքատ է, որովհետև իմպերիալիստական տերությունները դարերի ընթացքում շահագործել են բնակչությանը և կողոպտել երկրի հարստությունները։

Հնդկաստանի մալթուսականները բնակչության աղքատությունը և երկրի հետամնացությունը բացատրում են բնակչության գերաճով։ Դժվար չէ ցույց տալ մալթուսականների սխալը, դուգահեռ անցկացնելով Հնդկաստանի և սոցիալիստական երկրների միջև։ Վերևում մատնանշեցինք Հնդկաստանի հարևան՝ Ժողովրդական Չինաստանի գյուղատնտեսության բերքի ռեկորդային աճը, որի հետևանքով մի անգամ ընդմիշտ վերացել է սովի սպառնալիքը։

Մալթուսականները Հնդկաստանի դժվարությունները բացատրում են բնակչության խտությամբ և հողի բերրիության անկմամբ, որ նույնպես ճիշտ չէ։ 1931 թ. մարդահամարի տվյալներով Հնդկաստանում մեկ քառակուսի կիլոմետրին ընկնում էր 76 մարդ, իսկ ներկա Լեհաստանում՝ 77 մարդ։ Չեխոսլովակիայում՝ 95 մարդ, Հունգարիայում՝ 99 մարդ։ Բացի այդ, Հնդկաստանի հողը ավելի բերքատու է, քան հարավ-արևելյան Եվրոպայի վերոհիշյալ երկրների հողերը։ Սակայն ժողովրդական դեմոկրատիայի երկրներում չկան գործազուրկներ, չկա գերբնակչություն։ Ընդհակառակը, այս երկրներում տարեցտարի աճում է լայն սպառման առարկաների արտադրությունը, ավելանում է ազգաբնակչության բնական աճը, խիստ կերպով իջել է մահացության տոկոսը։

Հնդկաստանը դեռ չի կարողանում ինքնուրույն և արագ տեմպերով զարգացնել իր երկրի էկոնոմիկան, հնդիկ գյուղացին դեռ շատ հետամնաց է ու աղքատ։ Այս մասին է Ջավահարլալ Ներուն նշում իր հոդվածում. «Չխոսելով Հնդկաստանի ընդհանուր չքավորության մասին, մենք սարսափելի աղքատություն ենք հանդիպում երկրի մի շարք խոշոր շրջաններում։ «Հողային ռեֆորմը,—շարունակում է Ներուն,—ունի հատուկ նշանակություն, որովհետև առանց նրան, օրինակ՝ այնպիսի գերբնակված երկրում, ինչպիսին Հնդկաստանն է, անհնարին է արմատապես մեծացնել գյուղատնտեսության արտադրողականությունը... Բա (հողային ռեֆորմը, - Գ.Ո.) աջակցում է հասարակության հին, լճացած, դասակարգային կառուցվածքի խորտակմանը»։

Այսպիսով, Ներուն ընդունում է և աղքատության, և գերբնակչության փաստերը, նա ձգտում է վերացնել դրանք, սակայն հազիվ թե նրան հաջողվի Հնդկաստանին դուրս բերել այդ հետամնաց վիճակից։

Անժխտելի է, որ հետամնաց երկրներում աղքատությունը ավելի խոշոր չափեր է ընդունել։ Սակայն չէ՞ որ այստեղ էլ դարձյալ մեղավոր են կապիտալիստները և, առաջին հերթին, օտարերկրյա կապիտալիստները։ Անգլիան ավելի քան երկու հարյուր տարի շահագործում է Հնդկաստանի աշխատավորությանը։ Նույն բանը կատարում են մնացած երկրների կապիտալիստները, շահագործելով տնտեսապես ու քաղաքականապես թույլ զարգացած երկրները։

* *

Չի կարելի թաքցնել ժողովրդներից այն ակնհայտ ճշմարտությունը, որ աշխարհը բավականաչափ ռեսուրսներ ունի, բոլորին նորմալ սնունդով ապա-

* Տե՛ս „Проблемы мира и социализма", № 4. 1958, стр. 42.

հովելու համար։ Եթե կապիտալիստական աշխարհի ժողովուրդների մեծ մասը ապրում է տնտեսական ծանր վիճակի մեջ, ապա այդ տեղի է ունեցել և ունենում է այն պատճառով, որ բուրժուական քաղաքակրթությունը և նրա արտադրության եղանակը ստեղծված են տնտեսական և սոցիալական անհավասարության հիմքերի վրա։

Արդի բուրժուական քաղաքական միտքը կառչում է այն կեղծ իդեայից, թե իբր տնտեսական կյանքը մի յուրահատուկ խաղ է, որի մեջ ոմանք պետք է մշտապես տուժեն, որպեսզի ապահովվի մյուսների տնտեսական փարթամ կյանքը։ Առաջադեմ մարդկանց պայքարը պետք է ծառայի նման սնանկ, իրենց դարն ապրած ռեակցիոն կոնցեպցիաների մերկացմանը։

Սոցիալիստական արտադրաեղանակի հաղթանակը Սովետական Միության մեջ և սոցիալիստական լագերի մեացած երկրներում լիկվիդացրեց կապիտալիզմին հատուկ սոցիալ-տնտեսական անհավասարությունները և լայն ասպարեզ բացեց արտադրողական ուժերի և մասնավորապես ագրոբիոլոգիական գիտության զարգացման համար։

Ժամանակակից գենետիկայի նվաճումները լայն հնարավորություններ են ընձեռում Սովետական Միության, Կանադայի և Ալյասկայի մերձբևեռային շրջանների հողերը յուրացնելու համար։

Սովետական Միությունը ներկայումս օգտագործում է Սիբիրի և Ղազախստանի երբեմնի մերկ տափաստանները՝ խամ ու խոպան հողերը։ Այս հողերում այժմ աճում են աշնանացանն ու գարնանացանը, կարտոֆիլը և կաղամբը։

Ինչպես նշել է Ռոբերտ Սոլտերը, եթե օգտագործվեն Աֆրիկայում, Օվկեանիայում (ներառյալ Ավստրալիան) և Հարավային Ամերիկայում դեռևս անմշակ հողերը, ապա լրացուցիչ կստեղծվեր 400 մլն. հեկտար օգտագործելի հողատարածություն գյուղատնտեսության համար։ Եթե Ռուսաստանում և Կանադայում յուրացվի պոդզոլների (մոխրահողերի) 10 տոկոսը, ապա ցանքադաշտերը կավելանան ևս 120 միլիոն հեկտարով։ Ագրոտեխնիկական միջոցառումների լայն կիրառումը՝ մասնավորապես հողի կորուստները փոխհատուցելու և նրա բերրիությունը բարձրացնելու նպատակով՝ բոլոր բուսական մեացորդների օգտագործումը հնարավորություն կտան մեծ չափով ավելացնելու բերքատվությունը։

Պրոգրեսիվ հողագործության և ռացիոնալ երկրագործության հայտնի ջատագով Էդուարդ Ֆոլկների ստեղծած ագրոտեխնիկան ժխտում է այն թեորիան, որի համաձայն ուժասպառ եղած հողերը վերականգնելու համար անհրաժեշտ են երկարատև բնական պրոցեսների հազարավոր տարիներ։ Ֆոլկները գտնում է, որ հենց ինքը՝ մարդը կարող է էրոզիայից վնասված հողերը վերականգնել համեմատաբար պարզ ագրոտեխնիկական միջոցառումների օգնությամբ։ Եթե հնարավոր է ստեղծել նոր հողեր և Հոլանդիայի օրինակով ափամերձ ծանծաղուտ ծովերի հատակը վերածել պիտանի հողերի՝ ապա շատ ավելի հեշտ է վերականգնել ուժասպառ եղած հողերը, կամ պիտանի դարձնել այն հողերը, որ հարմարեցված չեն մշակման համար։

Սովետական գիտնականները և կապիտալիստական երկրների առաջավոր գիտնականները հետազոտել և գտել են հողի պտղաբերության բարձրացման մի շարք եղանակներ ու մեթոդներ, որոնք հսկայական չափով բարձրացնում են բերքատվությունը, օրինակ՝ պարարտանյութերի օգտագործում, խոտաբաշ-

տային ցանքաշրջանառությունների և հողի պահպանման մյուս կատարելագործված մեթոդներ և այլն։

Սովետական գիտնական՝ ակադեմիկ Լ. Ի. Պրասոլովը գտնում է, որ ժամանակակից ագրոնոմիական գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակին համապատասխան գյուղատնտեսության համար պիտանի հողերի տարածությունը կազմում է 10,5 միլիարդ հեկտար, իսկ ներկայումս այդ քանակից օգտագործվում է միայն մեկ միլիարդ հեկտարը։

Հատկանշական է այն անառարկելի ճշմարտությունը, որ աշխարհի բոլոր երկրներում եղած հողային տարածությունների միայն աննշան մասն է օգտագործվում գյուղատնտեսության արտադրության համար։ Այսպես, օրինակ, Մեքսիկայում վարելահողի, խաղողի և պտղատու այգիների, ցանովի խոտերի տակ գտնվում է ամբողջ հողերի $25^0/_0$-ը, Չիլիում՝ 10, Ուրուգվայում՝ 7, Արգենտինայում՝ $16^0/_0$ և այլն։

ՄԱԿ-ին կից գյուղատնտեսական և պարենային հարցերի հանձնաժողովի տվյալների համաձայն վերջին տարիներին սննդամթերքների արտադրությունը տարեկան աճում է $3^0/_0$-ով, իսկ երկրի բնակիչների թիվը $1,5^0/_0$-ով։ Այժմ, երբ ագրոնոմիական հետազոտություններով հաստատված է, որ երկրագունդն ունի մինչև այժմ չօգտագործված հսկայական պաշարներ, երբ այժմյան տեխնիկան հնարավորություն է տալիս գյուղատնտեսությունը զարգացնել ոչ միայն անապատների և կիսաանապատների գոտում, այլև Անդրբևեռային գոտում, մալթուսականների հոռետեսությունն ուղղակի ծիծաղելի է։ Իսրաելի բնակիչները ներկայումս բույսեր են աճեցնում այնպիսի չորացած հողերում, որտեղ համարյա անձրև չի գալիս և խոնավության միակ աղբյուրը գիշերային ցողն է։

Մարքսիզմի կլասիկները կործանիչ հարված հասցրին մալթուսականներին ու նրանց կողմնակիցներին, հողի նվազող բերրիության «օրենքի» թեորիայի պաշտպաններին։ Թեորիապես, գիտության ու հասարակական պրակտիկայի հարուստ փորձի հիման վրա, նրանք ցույց տվին, որ եթե գյուղատնտեսությունն ընթանում է գիտական հիմունքներով և սոցիալական պրոգրեսիվ պայմաններում, ապա կարելի է ապահովել մթերքների մշտական աճ և դրա հետ միասին բարձրացնել հողի բերրիությունը։ Այս բոլորը անհնարին է կապիտալիզմի օրոք։ Այդ հնարավոր է միայն սոցիալիստական արտադրության եղանակի պայմաններում, և այդ բանի արդյունքները մենք այժմ տեսնում ենք սոցիալիզմի երկրներում։